


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է Մ/Խ ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ
 ՏՆՕՐԵՆ *[Signature]* Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
[Signature] 27 2023թ.



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
 ՊՈԱԿ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ԹԵՄԱ-«ՀՈԿՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ
 ԱՆԳԼԵՐԵՆ ԳՐՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

ԱՌԱՐԿԱ _ ԱՆԳԼԵՐԵՆ

ԴԱՍԱՐԱՆ _ VII

ՈՒՍՈՒՅԻՉ . Ա. ՄԵԼՈՅԱՆ / *[Signature]*

Մ/ՄՆԱԽԱԳԱՐ

Լ. ԲԱԽՇԻՅԱՆ / *[Signature]*

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ *[Signature]*

Նախագծային աշխատանքի հաշվետվություն անգլերեն առարկայից

**Նախագիծ՝ Հովհաննես Թումանյանի «Հեքիաթներ»
անգլերեն գրքի ստեղծում**

Ուսուցիչ՝ Աստղիկ Մելոյան

Նախագծի նպատակը՝ Կարողանալ ինքնուրույն
թարգմանություն կատարել (հայերենից անգլերեն)

Արդյունքը՝ Սովորողը ավելի լավ կյուրացնի այդ (հայերեն և
անգլերեն) լեզուները, ավելի գրագետ կգրի անգլերեն
լեզվով:

2023-2024 ուսումնական տարվա սկզբից որոշեցի 7-րդ դասարանում «Անգլերեն» առարկայից նախագծային աշխատանքի ուսուցումը կազմակերպել հեքիաթների հիման վրա: Ըստ նախագծի՝ Հովհաննես Թումանյանի նախապես ընտրված հինգ հեքիաթները սովորողները պետք է թարգմանեին անգլերեն՝ անգլերենի ուսուցումը տարվեր հենց իրենց ստեղծած տեքստերի հիման վրա: Նախագիծը մեթոդապես հիմնավորված էր. ուսուցումը տարվելու էր մանկավարժական կառուցողական սկզբունքով՝ սովորելու համար պատրաստի տեքստեր չէին տրվելու: Այդ տեքստերը հենց իրենք էին ստեղծելու: Օտար լեզվի ուսուցումը տարվելու էր սովորողների մայրենի լեզվի բառապաշարը և լեզվական կառուցվածքների իմացությունը հաշվի առնելով: Սովորողների հետ միասին թարգմանել և ստեղծել ենք մեր տեքստերը, որոնք հենց այդ հեքիաթներն էին: Այդ տեքստերը պատմելով, միմյանց հարցեր տալով, մտքերը քննարկելով մեր քննարկումները անցնում էին նպատակասլաց և արդյունավետ: Յուրաքանչյուր նոր տեքստ մոտեցնում էր մեր նախագծի վերջնական արդյունքին՝ «Հեքիաթների ժողովածու հայերեն և անգլերեն լեզուներով»: Տեքստերը ավելի խոսուն էին դարձնում

հեքիաթների բովանդակությանը համապատասխան
սովորողների՝ իրենց իսկ ձեռքով նկարված
նկարները: Նախագծի վերջնական արդյունքն էր սովորողների
կողմից ստեղծված հեքիաթների փոքրիկ գիրքը, որը կարող է
հետագայում օգտագործվել 5-6 դասարանների աշակերտների
համար որպես ուսումնական նյութ: